ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1601-18 գրությամբ «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 29.01.2018թ. թիվ ԴՎԱ/314 գրության հիման վրա, 01.02.2018թ. թիվ 03/26-3/1601-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. <u>«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 02.02.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1682-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 14.02.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2017թ. մայիսի 2-ին կնքվել է թիվ «ՇՀԱՊՁԲ-20/1-2» ծածկագրով գնման պայմանագիր /այսուհետ նաև՝ Պայմանագիր/:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ /հավելված թիվ 2/ Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված թիվ 3/:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ պետք է մատակարարվի բահեր՝ երկարությունը 110սմ, կտրող մասը մետաղյա՝ երկարությունը-25 սմ, լայնությունը-20սմ, կտրող մասի երկարության և լայնություն թույլատրելի շեղումները 5մմ, կոթը՝ փայթից, տրամագիծը ոչ պակաս՝ 35մմ, կոթի երկարությունը ոչ պակաս 85սմ:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ 15.000 հատ բահերը, որի ընդհանուր գինը կազմում է 16,500,000 ՀՀ դրամ /միավորի գինը 1.100/ պետք է Գնորդին մատակարարվեր 2017 թվականի 3-րդ եռամսյակում:

Պայմանագրի թիվ 3 հավելվածի, վճարման ժամանակացույցի համաձայն՝ վճարումը պետք է կատարվեր 2017թ. ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2017թ.:

Ընկերությունը հայտնել է, որ Վաճառողի կողմից նախքան Ապրանքի մատակարարումը, Գնորդի համապատասխան ստորաբաժանմանն է ներկայացվել ապրանքի նմուշը, որը համապատասխան ստորաբաժանման կողմից արժանացել է հավանության և տրվել է գրավոր թույլտվություն Ապրանքի մատակարարման համար:

Պայմանագրի 6-րդ կետի 6.2-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ, Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնամ-ընդունման արձանագրության երկու օրինակ /հավելված թիվ 4/ և Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը /հավելված թիվ 4.1/:

Նույն կետի 6.3-րդ ենթակետի համաձայն՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամ մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում:
6.4-րդ ենթակետի համաձայն՝ Գնորդը հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չնդունելու պատճառաբանված մերժումը:

Նույն կետի 6.5-րդ ենթակետի համաձայն՝ եթե Գնորդը Պայմանագրի 6.4-րդ կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձման-ընդունման արձանագրությունը:

Ընկերությունը նշել է, որ Վաճառողի կողմից 2017թ. դեկտեմբերի 18-ին Գնորդին է ներկայացվել մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության երկու օրինակ /հավելված թիվ 4/ և Պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը /հավելված թիվ 4.1/:

ՀՀ պաշտպանության նախարարության 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/314 գրության համաձայն՝ Պատվիրատուն հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7 և 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 2018թ. հունվարի 19-ից միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների բողոքարկման խորհրդին /այսուհետ նաև՝ Խորհուրդ/ է ներկայացրել 16.12.2017թ. արձանագրությունը այն մասին, որ Ընկերության կողմից մատակարարված բահերը իրենց տեխնիկական բնութագրով էականորեն տարբերվում են Պայմանագրով նախատեսված բահերի տեխնիկական բնութագրերից:

Վերը նշված արձանագրության տակ ստորագրել են ՀՀ ՋՈՒ ԻՋՊՏ-ՎՊ տեղակալ, գնդապետ Հ. Հարությունը, ՀՀ ՋՈՒ ԻՋՎ ԻՍ բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայանը, ՀՀ ՋՈՒ ԻՋՎ ԻՍ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյանը, ՀՀ ՊՆ 13516 զ/մ-ի ՊԽ պահեստի պետ, ենթասպա Ս. Սարգսյանը և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Մեհրաբյանը:

Վերոհիշյալի կապակցությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1. Արձանագրության ամսաթիվն ու վայրը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության տնօրեն Կ. Մեհրաբյանը այդ օրը չի եղել ք. Էջմիածնում:

2. ՀՀ ՊՆ 23.01.2018թ. ԴՎԱ/241 գրությամբ նշվել է հետևյալը՝ ««Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 18.12.2017թ. մատակարարված բահերը չեն համապատասխանում Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին», այնինչ արձանագրությունը կազմվել է ըստ ներկայացված փաստաթղթի 16.12.2017թ. ք. Էջմիածնում:

3. Եթե անհամապատասխանության վերաբերյալ արձանագրությունը կազմվել է 16.12.2017թ., ապա այս պարագայում Ընկերությունը ում թույլտվությամբ է 18.12.2017թ. մատակարարել 15 000 հատ բահ և ինչու նախապես չի արգելվել ընկերությանը ապրանքը չմատակարարելու համար:

4. Խորհրդին է ներկայացվել տվյալ արձանագրության պատճենահանված տարբերակը, այլ ոչ բնօրինակը, իսկ եթե դա բնօրինակից արտատպված է, ապա էլ. փոստով ուղարկելու ժամանակ կնիքը և ստորագրությունները պետք է լինեին գունավոր:

Ամփոփելով վերը նշվածը Ընկերությունը հայտնել է, որ տվյալ պարագայում ակնհայտ է դառնում, որ կողմերը չէին կարող մինչև ապրանքի փաստացի մատակարարելը

ստորագրեին անհամապատասխանության վերաբերյալ արձանագրություն, իսկ դրանից հետո մատակարարվեր ապրանքը, դա առնվազն տարօրինակ է, և վկայում է այն մասին, որ եղել է նախնական համաձայնություն ապրանքի մատակարարման համար:

5. ՍՑ-ԱՄ-2018/16 ծածկագրով 06.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ապրանքը Ընկերության կողմից հանձնվել է ի պահ:

Ընկերությունը նշել է, որ եթե իրոք այդպես է և ապրանքը հանձվել է ի պահ, ապա այդ պարագայում գործի նյութերում ևս բացակայում է Պատվիրատուի ներկայացուցչի կողմից մատնանշված փաստաթուղթը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից, Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2017թ. մայիսի 2-ին կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-20/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելը ոչ իրավաչափ է:

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն ի լրումն 14.02.2018թ. ներկայացված առարկությունների 20.02.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը,

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին է ներկայացրել 16.12.2017թ. կազմված արձանագրությունը այն մասին, որ Ընկերության կողմից մատակարարված

բաները իրենց տեխնիկական բնութագրով էականորեն տարբերվում են Պայմանագրով նախատեսված բաների տեխնիկական բնութագրերից:

Վերը նշված արձանագրության տակ ստորագրել են ՀՀ ԶՈՒ ԻՋՊՏ-ՎՊ տեղակալ, գնդապետ Հ. Հարությունը, ՀՀ ԶՈՒ ԻՋՎ ԻՍ բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայանը, ՀՀ ԶՈՒ ԻՋՎ ԻՍ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյանը, ՀՀ ՊՆ 13516 զ/մ-ի ՊԽ պահեստի պետ, ենթասպա Ս. Սարգսյանը և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Մեհրաբյանը:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված արձանագրությունը հավանաբար կեղծ է, այն չի համապատասխանում իրականությանը, Ընկերության կողմից հիշյալ արձանագրությունը չի կնքվել և չի ստորագրվել:

Ընկերությունը նշված գրությամբ միջնորդել է Խորհրդին միջոցներ ձեռնարկել՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել տրամադրել արձանագրության բնօրինակը:

Վերոգրյալով պայմանավորված, Ընկերությունը խնդրել է Խորհրդին 16.12.2017թ. կազմված արձանագրությունը չհամարել որպես հիմք և ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2017թ. մայիսի 2-ին կնքված թիվ «ՇՀԱՊՁԲ-20/1-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելը ճանաչել ոչ իրավաչափ:

«Էլիպս գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.02.2018թ. ժամը 11:15-ի և 27.02.2018թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/314 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետերի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարիի 19-ից միակողմանի՝ ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ հայտնել է, որ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.01.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 06.02.2018թ. ժամը 11:15-ի և 27.02.2018թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/16 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/16 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-20/1-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր բահեր՝ երկարությունը՝ 110սմ, կտրող մասը մետաղյա՝ երկարությունը -25սմ, լայնությունը-20սմ, կտրող մասի երկարության և լայնության թույլատրելի շեղումները՝ 5մմ, կոթը՝ փայտից, տրամագիծը ոչ պակաս՝ 35մմ, կոթի երկարությունը ոչ պակաս 85 սմ:

4. Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/314 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարիի 19-ից միակողմանի՝ ամբողջությամբ լուծել է վերը նշված պայմանագիրը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1601-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/314 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ի 14.02.2018թ. և 20.02.2018թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը*** կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման

գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-20/1-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր բահեր՝ երկարությունը՝ 110սմ, կտրող մասը մետաղյա՝ երկարությունը-25սմ, լայնությունը-20սմ, կտրող մասի երկարության և լայնության թույլատրելի շեղումները՝ 5մմ, կոթը՝ փայտից, տրամագիծը ոչ պակաս՝ 35մմ, կոթի երկարությունը ոչ պակաս 85 սմ:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում:

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն 15.12.2017թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվում է մինչև 20.12.2017թ. ներառյալ ՀՀ պաշտպանության

նախարարությանը մատակարարել 02.05.2017թ. կնքված N «ՇՀԱՊՁԲ-20/1-2» պայմանագրով նախատեսված ապրանքները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Կ.Մեհրաբյանի կողմից 16.12.2017թ. կազմվել է արձանագրություն հետևյալի մասին. ««ՇՀԱՊՁԲ-20/1-2» առ 02.05.2017թ. պայմանագրի համաձայն՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կենտրոնական ենթակայության պահեստ է մուտքագրվել 15 000 բահեր: Մուտք եղած բահերը իրենց տեխնիկական բնութագրով էականորեն տարբերվում են պայմանագրով նախատեսված բահերի տեխնիկական բնութագրից»:

Վերը նշված արձանագրության տակ ստորագրել են ՀՀ ԶՈՒ ԻԶՊՏ-ՎՊ տեղակալ, գնդապետ Հ. Հարությունը, ՀՀ ԶՈՒ ԻԶՎ ԻՍ բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայանը, ՀՀ ԶՈՒ ԻԶՎ ԻՍ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյանը, ՀՀ ՊՆ 13516 զ/մ-ի ՊԻՍ պահեստի պետ, ենթասպա Ս. Սարգսյանը և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Մեհրաբյանը:

Պայմանագրի կատարման վերաբերյալ 18.12.2017թ. կազմված եզրակացության համաձայն՝ Պայմանագրի շրջանակներում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն մատակարարել է 15 000 հատ բահեր, սակայն մատակարարված բահը էականորեն տարբերվում է պայմանագրի տեխնիկական բնութագրով նշված բահից՝ կտրող մասի երկարությունը 25սմ-ի փոխարեն կազմում է 28.5 սմ, իսկ կտրող մասի լայնությունը 20սմ-ի փոխարեն կազմում է ներքևի հատվածում 19.5սմ, միջին հատվածում 21 սմ, այն դեպքում երբ պայմանագրով թույլատրելի շեղումը տրված է 0.5 սմ: Ուշացումը կազմում է 78 օր:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/241 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.09.2017թ. մատակարարել 15 000 հատ «Բահ»՝ 16 500 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Ըստ պատասխանատու ստորաբաժանման համապատասխան ստորաբաժանման եզրակացության՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 18.12.2017թ. մատակարարված բահերը չեն համապատասխանել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին: Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան բահերի մատակարարում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 ենթակետի «բ»

պարբերությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.01.2018թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով պայմանագիրը:

Այսպես, Պայմանագրի 6-րդ կետի 6.3-րդ ենթակետի համաձայն՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամ մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում:

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն 20.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ վիճարկել է այն փաստը, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՍՑ-ԱՄ-2018/16 պաշտոնական ընթացակարգի շրջանակներում Խորհրդին տրամադրված 16.12.2017թ. արձանագրությունը կեղծ է և, որ Ընկերության տնօրենի կողմից այն չի ստորագրվել և կնքվել:

Միաժամանակ վերը նշված գրությամբ Ընկերությունը միջնորդել է Խորհրդին միջոցներ ձեռնարկել՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնելու տրամադրել արձանագրության բնօրինակը:

Խորհուրդը 21.02.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1212912]-18 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել է, որ վերը նշված խնդրի լուծման նպատակով Խորհրդի կողմից 27.02.2018թ. ժամը 11:00-ին նշանակվել է ՍՑ-ԱՄ-2018/16 պաշտոնական ընթացակարգով հերթական նիստ և խնդրել է նիստին ապահովել ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցչի մասնակցությունը, ինչպես նաև Խորհրդին տրամադրել 16.12.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված արձանագրության բնօրինակը՝ բաների անհամապատասխանության վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչը, ապահովելով իր մասնակցությունը 27.02.2018թ. ժամը 11:00-ին ՍՑ-ԱՄ-2018/16 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստին, Խորհրդին է տրամադրել 16.12.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված արձանագրության բնօրինակը, որը նիստի ժամանակ Խորհրդի կողմից տրամադրվել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցչին:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից 16.12.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից կազմված արձանագրության բնօրինակի վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որի չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-20/1-2 ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից 19.01.2018թ. Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, քանի որ Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված համապատասխան բահերի մատակարարում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ առկա է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 20.02.2018թ. թիվ ՍՑ-ԱՄ-2017/96 որոշումը, որով արձանագրվել է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից 18.12.2017թ.-ին Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, քանի որ Ընկերությունը չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված 400 հատ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի,

ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակը, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ ***«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն մեկ տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծարմանը:***

Միևնույն ժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***վերջինիս վերագրվող խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման***

առկայությունը, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 18.12.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1601-18 գրությամբ ներկայացված «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2018թ. թիվ 03/26-3/1601-18 գրությամբ «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02627826) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ